№ 14 ԵՐԵՔՇԱԲԹԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 30 **1893** ԵՐԵՔՇԱԲԹԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 30 № 14

ՔՍԱՆՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 7 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԱՌԱՋԻԿԱՅ 1894 ԹԻԱԿԱՆԻՆ

22-ՐԴ ՏԱՐԻ **„ՄՇԱԿ“** 22-ՐԴ ՏԱՐԻ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

կը հրատարակվի Թիֆլիսում, նոյն դիրքով, նոյն պրոգրամայով և նոյն ուղղութեամբ: Մենք ստանում ենք տեղական ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.

«ՄՇԱԿԻ» տարեկան գինը 10 ռուբլի է, կէս տարվանը՝ 6 ռուբլի, ամսական՝ 1 ռուբլի:

Գրվել «ՄՇԱԿԻՆ» կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ (Բաղդնայա և Բարօնսկայա փողոցների անկիւնում);

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար, և առհասարակ նամակներ և ծրարներ ուղարկելիս, պէտք է դիմել հետևեալ հասցէով. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ», *իսկ արտասահմանից* Tiflis, Rédaction du journal arménien «MSCHAK».

Ներկայ 1893 թ. նոյեմբերի 1-ից մինչև դեկտեմբերի վերջը «Մշակին» բաժանորդ գրվողները պէտք է վճարեն 2 ռուբլի:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ինչպէս հաց մատակարարենք.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. *Կովկասեան ուսումնարանական շրջանը. Մատենագրութիւն. Նամակ Էջմիածնից. Նամակ Երևանից. Նամակ խմբագրութեան. Ներքին լուրեր.*—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. *Դժոխային մեքենայ. Սըր Ջլար Ֆօրդ. Տեղեկութիւններ թիւրքաց Հայաստանից. Արտաքին լուրեր.*—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ԲՕՐՍԱ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. *Բագուի հայոց աղքատախնամ ընկերութիւնը.*

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԲԱԳՈՒԻ ՀԱՅՈՑ ԱՂՔԱՏԱԽՆԱՄ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

Ներկայ թուականի ապրիլին, թեմական առաջնորդ Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատեանի ներկայութեամբ, կատարվեց Բագուի հայոց աղքատախնամ ընկերութեան նոր հոգաբարձուների ընտրութիւնը: Ընտրվեցին՝ պ. պ. բժ. Մկր. Զաւեան, Ասա. Կաճկաճեան, Համբ. Մելիքեան և Արս. Կրասիլնիկեան:

Յայտնի ճշմարտութիւն է, որ երբ որ և է բարեգործական հիմնարկութեան համար հասարակութիւնը ընտրում է նոր հոգաբարձուներ, այն ժամանակ հին հոգաբարձուները պարտաւոր են յանձնել նորերին այդ հիմնարկութեան բոլոր գործերը և հաշիւները: Սակայն, ինչպէս երևում է, մեր հին հոգաբարձուները իրանց այդ պարտականութեան մասին ոչինչ չը գիտեն, որովհետև դեռ մինչ օրս նրանք չեն յանձնել նոր հոգաբարձութեանը Աղքատանոցի գործերը և հաշիւները, և հէնց այդ իսկ պատճառով դեռ պաշտօնապէս յայտնի չէ նոր հոգաբարձութեան՝ արդեօք Աղքատանոցը, բացի իրան յատկացեալ շինութիւնից, ունի՞ որ և է դրամագլուխ կամ անշարժ կալուածք, թէ ո՞չ:

Ուրեմն ինչ պիտի անէր նոր հոգաբարձութիւնը այդպիսի հանգամանքներում, եթէ ոչ մոռացութեան տալ մեծահռչակ Աղքատանոցի անցեալը, հին հոգաբարձուներից հաշիւներ ստանալու գործը թողնել աւելի պատեհ ժամանակին և նորից սկսել գործը բոլորովին նոր ուղղութեամբ: Այդպէս էլ եղաւ:

Նա ձեռք բերեց Աղքատանոցի համար հին հոգաբարձութեան մշակած կանոնադրութիւնը, որի 3-որդ յօդուածում գրված է. «Հոգաբարձութիւնը պարտաւոր է հոգալ՝ միջոցներ գտնել անկելանոց կառուցանելու, եկեղեցական ծխական դպրոց բանալու, արհեստանոց հիմնելու, հիւանդանոց բանալու, աղքատ հիւանդները բժշկելու, անտէր ննջեցեալներին թաղելու, աղքատներին և անանկնեներին հարկաւոր օգնութիւն հասցնելու և չքաւոր հայ օրիորդների պսակման օգնելու»:

Այստեղ թուած բարեգործական նպատակները և գործերը ողջան էլ սկզբունքով համակրելի լինեն, բայց և այնպէս այդ ամենը առ այժմ կարելի չէ միանգամից ձեռնարկել ու իրագործել, որովհետև նախ՝ յիշեալ հիմնարկութիւնները կազմակերպելու համար հարկաւոր է առանձին և յատուկ իրաւունք ու կանոնադրութիւն ձեռք բերել մարմնաւոր և հոգևոր իշխանութիւնից և երկրորդ՝ հարկաւոր է նիւթական միջոց ունենալ, որ, դժբախտաբար, չը կայ: Այդ բոլորը ի նկատի ունենալով՝ ներկայ հոգաբարձութիւնը իր ուշադրութիւնը դարձրեց առաւելապէս այն բանի վրա, թէ՝ ինչ նպատակի ծառայեցնել Աղքատանոցի շինութիւնը, այսինքն բարեգործական հիմնարկութիւնների ո՞ր տեսակը պէտք է կազմէ Բագուի հայոց Աղքատանոցը: Իսկ այդ նպատակը որոշելու համար՝ անհրաժեշտ էր նախապէս որոշել, թէ Բագուի բազմաթիւ և բազմատեսակ հայ աղքատներից ու տնանկներից, ո՞րոնց պէտք է նախ և առաջ օգնութիւն հասցնել և ինչ եղանակով:

Քաղաքումս կան բաւական կաղեր, անդամալոյծներ և հաշմանդամներ, գրեթէ բոլորն էլ անտուն և անտէր: Ամբողջ շաբաթը թափառելով քաղաքիս մէջ, և կիրակի օրերը խունվելով եկեղեցու դռների շուրջը՝ դրանք մուրացկանութեամբ պահպանում են մի կերպ իրանց թշուառ գոյութիւնը: Ահաւասիկ հէնց այդպիսիներին պէտք է պատսպարել, կերակրել և հագցնել, միանգամայն արգելելով նրանց այնուհետև թափառաշրջիկութեամբ և մուրացկանութեամբ պարապելը: Բացի դրանից քաղաքումս կան բաւական որբ մանուկներ երկու սեռից, որոնց կեցութեան և պարապմունքի մասին հաղիւ թէ որ և իցէ մէկի մօտ ճշգրիտ տեղեկութիւններ լինեն: Նոր հոգաբարձութիւնը կարծում է, որ իր վրա դրված պարտականութիւններից ամենաէականը նա կատարած կը լինի, եթէ կարողանայ այդ որբերին ևս խնամել՝ պատսպարելով նրանց իր իրաւասութեան ներքոյ գտնված շինութեան մէջ և նրանց մարմնական ու բարոյական պիտոյքները հոգալով: Այդ հիման վրա նոր հոգաբարձութիւնը սկզբունքով որոշեց Բագուի հայոց Աղքատանոցը վերածել Անկելանոց-Որբանոցի:

Այդ որոշումից յետոյ հոգաբարձութիւնը գնաց Աղքատանոց, զննեց շինութիւնը և Անկելանոց-Որբանոցի վերածելու համար շատ յարմար դտաւ: Շինութեան մէկ մասը կարելի է յատկացնել Որբանոցին, իսկ միւսը Անկելանոցին: Որբանոցում կարելի է զետեղել 60 մանուկներ, իսկ Անկելանոցում 50 տնանկներ: Հոգաբարձութիւնը հէնց այն ժամանակից իր նպատակը իրագործելու համար սկսեց որոնել և գտնել արդիւնքի աղբիւրներ և բաց արեց հանգանակութիւն, որն այժմ շատ աջող է գնում: Դրանց մէջ առանձին ուշադրութեան արժանի է այն, որ հոգաբարձութիւնը որոշել է տարեկան անդամակցական տուրք նշանակել կամաւոր՝ 25 ր., 10 ր., 5 ր., 3 ր., որպէս զի ամէն դասակարգի մարդկանց էլ հնարաւորութիւն տրվի մասնակցել պարբերաբար այս համակրելի գործին:

Հանգանակութիւն սկսելով՝ հոգաբարձութիւնը մի և նոյն ժամանակ սկսեց հետաքրքրվել Աղքատանոցում բնակվողների կեցութեամբ, վարք ու բարքով, որպէս զի ճշգրտութեամբ կարողանայ որոշել թէ ո՞ր աստիճանի են համապատասխանում նրանք հոգաբարձութեան նախադրած նպատակներին: Եւ ահա թէ ինչ եզրակացութեան հասաւ: Այժմեան մեծահռչակ՝ Աղքատանոց անուն կրող հիմնարկութիւնը ներկայացնում է լոկ մի տուն, բնակեցրած առանց որ և է ընտրողութեան և սիստեմի զանազան տեսակ մարդկանցով, այր ու կին, տղաներ ու աղջիկներ, մեծ մասամբ ընդունակ աշխատելու և նոյն իսկ արհեստաւորներ, խառնված մի տան մէջ, մինչև անգամ մի բնակարանում՝ այրին ամուրիի հետ ու անարատը բարոյապէս փչացածի հետ, թափառաշրջիկը արհեստաւորի հետ, որի անմիջապէս հետևանքն է մշտական կռիւներ իրար մէջ, անբաւականութիւններ և ամենազզուելի զեղծումներ բարոյականութեան դէմ...

Այդ բոլորը ի նկատի ունենալով, ինքն ըստ ինքեան հարց է ծագում. ինչպէս պէտք է նայէր նոր հոգաբարձութիւնը այդ խառնիճաղանճ հասարակութեան վրա: Արդեօք լաւ չէ՞ արել նա՝ վրճռելով հեռացնել նրանց այդ տնից, մանաւանդ որ այդ տունը Որբանոց-Անկելանոցին ծառայեցնելու համար, անհրաժեշտ են մի քանի նորոգութիւններ:

Այդ հիման վրա հոգաբարձութիւնը դեռ յունիս ամսի սկզբներին յայտնել էր Աղքատանոցում բոլոր ապրողներին՝ մինչև սեպտեմբերի 1-ը դատարկել սենեակները, խոստանալով մի առ ժամանակ սենեակի վարձ: Սակայն սեպտեմբերը անցել է, բայց Աղքատանոցից ոչ ոք չէ հեռացել: Հոգաբարձութիւնը ստիպված եղաւ հոկտեմբեր ամսին կրկին անգամ յայտարարել կեցողներին՝ Աղքատանոցի սենեակները դատարկելու մասին:

Ահաւասիկ հոգաբարձութեան այդ քայլը հէնց առաջին անգամից հանդիպեց անաջողութեան և խոչնդոտների: Հակառակ կուսակցութեան մարդիկ՝ բարեգործի և խնամատարի կեղծ դիմակ ելեսներին՝ սկսեցին, իրանց յատուկ չնորքով, քաղաքիս մէջ տարածել զանազան անսպատ լուրեր նոր հոգաբարձութեան համար, իբր թէ ձմեռվայ օրը աղքատներին դուրս են անում Աղքատանոցից:

Ո՞ւր էիք մինչև այժմ հասարակական գործերի մեծապատիւ ցեցեր: Ի՞նչ էք ուզում դրանով ասել. նեղեալների բարեկամ էք: Սխալվում էք, չարաչար սխալվում: Անցան այն ժամանակները, երբ հասարակութեան աչքին թոզ փչելով, բարեգործի անուն էին վաստակում մարդիկ:

Այսպէս թէ այնպէս, այդ լուրերը հասնում են սրբազան առաջնորդին, նոյն իսկ Վեհափառ կաթողիկոսին: Առաջնորդը գրաւոր կերպով պատուիրել է նոր հոգաբարձութեան՝ աղքատներին հեռացնելու հարցը առ այժմ յետաձգել մինչև իր գալը Բագու: Հոգաբարձութիւնը սպասում է նրա գալուն:

Ահա Բագուի Աղքատանոցի նոր հոգաբարձութեան ընտած ուղղութիւնը և գործերի ընթացքի ճիշդ նկարագիրը, որի ճշգրտեան համար մենք կատարելապէս երաշխաւոր ենք:

Ֆ. Մարդանեան

ԻՆՉՊԷՍ ՀԱՅ ՄԱՏԱԿԱՐԱՐԵՆՔ

Ամբողջ պետութեան ուշադրութիւնն է դրաւել հաց պահելու, ժողովրդին տարուց տարի կանոնաւոր հաց մատակարարելու խնդիրը:

Մեր Անդրկովկասում այդ խնդրի կարևորութիւնը խիստ չէր զգացվում. բայց վերջին տարիների անբերրիութիւնից յետոյ նա դառնում է մեզ համար նոյնպէս ամենակենսական, ամենաէական խնդիր:

Ի՞նչպէս անենք, որ գիւղացին կարողանայ անբերրի տարիներում ունենալ իր ձեռքում բաւականաչափ հաց՝ փոխարինաբար կամ էժան գնով:

Խնդիրը, ըստ երևոյթին, շատ պարզ լուծում կը ստանայ, եթէ իւրաքանչիւր գիւղում կարողանանք հիմնել մի հացի շտեմարան, ուր իւրաքանչիւր գիւղացի պահում լինի մի երկու տարվայ պաշար: Այն ժամանակ գիւղացին կարող է դիմանալ մի քանի տարվայ անբերրիութեան ամենահեշտ կերպով. իսկ առատ տարիներ սկսվելուց՝ նա նորից կը լրացնէ իր պահեստից հանածը:

Բայց այդ պարզ ձևը այնպէս դիւրին չէ իրագործվում կեանքի մէջ, ինչպէս կարելի էր ենթադրել առաջին անգամից: Ժողովել այդքան հաց շատ դժուար է և նոյն իսկ անգործնական: Հեշտ չէ իւրաքանչիւր գիւղում շինել ամուր, յարմար շտեմարաններ, հեշտ չէ կարդել արթուն հսկողութիւն ընդունված հացահատիկների որակութեան և նրա պահպանութեան վրա:

Պետութեան շատ տեղերում այս վերջին թանգութեան ժամանակ երևաց, որ շտեմարանները դատարկ են, որ ամբարված հացը որակութեան կողմից շատ անբաւարար է, փչացել է վատ պահպանելուց, որ հաշւապահութիւնը ամենախայտառակ ընթացքի մէջ է:

Դեռ վաղ ժամանակներից առաջարկվել են միջոցներ փոքր ինչ կենտրօնացնել այդ ժողոված հացը մեծ շտեմարաններում, օրինակ մի քանի գիւղերի համար միատեղ: Մի քանի գաւառներում փորձել են ծրագիրներ կազմելու՝ աւելի ևս կենտրօնացնելու գործը, շինելով ամբողջ գաւառում 3—10 մեծ շտեմարաններ: Օրինակ Վեռատսկի նահանգի մի քանի գաւառները, աչքի առաջ ունենալով ներքին գործերի մինիստրի առաջարկութիւնը՝ կենտրօնացնելու հացի շտեմարանները (1874 թ. փետրվարի 8-ին) բաւական էին համարում իւրաքանչիւր գաւառի համար երեք շտեմարան:

Մեծ կենտրօնական շտեմարաններ հիմնելը, ճիշդ է, ունի այն անյարմարութիւնը, որ հեռացնում է գիւղացուն շտեմարանից, մանաւանդ այն տեղերում, ուր հաղորդակցութեան ուղիները բաւարար չեն. բայց ունի և անփոխարինելի առաւելութիւններ, որովհետև այդպիսի մեծ շտեմարանները կարելի է շինել ամենամեծ յարմարութիւններով, պահել լաւ վարձատրվող վերահսկող մարմին, որ մեծ զգուշութեամբ ընդունի հացահատիկը, նրան բաժանի տեսակների, ապահովացնէ խոնաւութիւնից, մկների և միջատների ուտելուց և այլն:—Շտեմարանների թիւը այս կամ այն գաւառում կախված է տեղական հանգամանքներից: Այնտեղ, ուր անանցանելի լեռներ շատ են, կան ճահիճներ և մեծ գետեր, բացակայում են սայլի ճանապարհներ, այնտեղ շտեմարանների թիւը պէտք է շատ լինի՝ համապատասխան տեղական պայմաններին:

Շտեմարանների նպատակը միայն այն չէ, որ նա օգնութեան դայ թանգութեան տարիներում, այլ նա կարող է պէտք դալ և սովորական տարիներում: Սերմ ցանելու դիրքերում հացի գինը բարձրանալու դէպքում՝ նա կարող է հանել հացի գինը, ինչպէս ասում է ռուսական ասացվածքը, «ինչպէս ասենք, ոչ թանկ, ոչ էլ էժան»:

Ինչպէս ասենք, ոչ թանկ, ոչ էլ էժան գինը ինչպէս է որոշվում: Դրա համար հարկաւոր է ունենալ հացի գնի ընթացքի ամենաճշգրիտ ցուցակներ: Ինչպէս ասենք, ոչ թանկ, ոչ էլ էժան գինը ինչպէս է որոշվում: Դրա համար հարկաւոր է ունենալ հացի գնի ընթացքի ամենաճշգրիտ ցուցակներ: Ինչպէս ասենք, ոչ թանկ, ոչ էլ էժան գինը ինչպէս է որոշվում: Դրա համար հարկաւոր է ունենալ հացի գնի ընթացքի ամենաճշգրիտ ցուցակներ:

ժամանակ յաճախ գիւղացին պաշար չէ ունենում իր տանը և ստիպված է լինում վաճառականից գնել սերմնացուն, որը, ի հարկէ, չէ կարող ամեն անգամ լաւը լինել, նա մանաւանդ եթէ գիւղացին մտադիր չէ թանգ գին վճարել նրա համար:

Գիւղացին շատ տեղերում չէ ընտելացել հացի շտեմարաններին և չէ տալիս նրանց արժանի կարևորութիւնը, շնորհիւ զանազան ձախորդ հանգամանքների: Նա կարող է հաշտվել նրանց գաղափարի հետ, երբ նրանց կազմակերպութիւնը կանոնաւոր և գործնական հիմքերի վրա դրված կը լինի, երբ նա իրապէս կը համոզվի, որ նրանք տալիս են էական օգուտ երկրագործութեանը:

Ժողովրդին հաց մատակարարելու խնդիրը ծնել է մի քանի նոր ծրագիրներ կառավարչական և զեմստվոյի շրջաններում: Նրանցից երկուսը արժանի են մեծ ուշադրութեան: Մէկը պատկանում է Թիֆլիսի նահանգապետ իշխան Շերվաշիձէին, ունի աւելի ընդարձակ նպատակ, քան հաց մատակարարելն է և յայտնի է հանրօգուտ կամ գիւղատնտեսական դրամագլուխ անունով, միւսը մշակվել է եւրոպական Ռուսաստանում զանազան անձերի ձեռքով և կրում է ցանքսերի պետական ապահովացում անունը և նպատակ ունի ապահովել ցանքսերը մերձաւորապէս այնպէս, ինչպէս, օրինակ, ապահովում են շինութիւնները հրդեհից կամ ապրանքները կորստից:

Այդ ծրագիրները՝ միացած շտեմարանների խնդրի հետ, շօշափում են ժողովրդական կեանքի այնպիսի մի էական կողմը, որ մամուլը պարտաւոր է նրան հանգամանօրէն քննել և ուսումնասիրել:

Մենք մեր կողմից՝ առանձին յօդուածներ կը նուիրենք այդ ծրագիրների քննութեան:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿՈՎԿԱՍԻ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԱԿԱՆ ՇՐՋԱՆԸ

Կովկասի ուսումնարանական շրջանի հոգաբարձու պ. Եանօվսկի հրատարակել է իր հոգաբարձութեան յանձնված դպրոցական հաստատութիւնների ընդհանուր հաշիւը 1892 թուի համար: Հաշիւը մանրամասն տեղեկութիւններ է պարունակում ամբողջ Կովկասում և Անդրկովկասում գտնված պետական, մասնաւոր, հայ-ծխական եկեղեցական և այլ ազգութիւններին պատկանող բոլոր դպրոցների վերաբերմամբ և մի ամփոփ գաղափար է տալիս մեր երկրի կրթական գործի դրութեան մասին:

Առ 1-ն յունվարի 1893 թուի Կովկասի շրջանում կային 9 արական կլասական գիմնազիաներ, 2 արական պրոգիմնազիաներ, 8 ռէալական դպրոցներ, 10 իգական գիմնազիաներ, 6 իգական պրոգիմնազիաներ, 1 ուսուցչական ինստիտուտ, 4 ուսուցչական սեմինարիաներ, 36 քաղաքային ուսումնարաններ, 5 լեռնական դպրոցներ, 7 արհեստագիտական դպրոցներ, 3 նաւային դասարաններ, 2 Մարինսկիյ իգական դպրոցներ, 89 մասնաւոր դպրոցական հաստատութիւններ և 914 սկզբնական դպրոցներ.—ընդամենը 1,096 կրթական հաստատութիւններ, որոնք անմիջապէս ենթարկվում են շրջանի հոգաբարձուին:

Մնացած դպրոցների թիւը, որոնց վրա պ. հոգաբարձուն միայն հսկողութիւն է անում 2926 է, որոնցից 197-ը հայ եկեղեցական-ծխական դպրոցներ, 1917 մահմեդական մադրասաներ մզկիթների մէջ, 39 հրէական դպրոցներ սինագոգաներում և 773 դպրոցներ ուրիշ մինիստրութիւնների և վարչութիւնների պատկանող, ինչպէս երկաթուղային, հոգևոր, երկրաչափական և այլն:

Ընդամենը բոլոր դպրոցական հաստատութիւնների թիւը Կովկասում և Անդրկովկասում 4022 է, իսկ եթէ չը հաշուենք 1917 մահմեդական մադրասաները, որոնց դժուար է համարել դպրոցներ, կունենանք միայն 2115 իսկական դպրոցներ:

Շրջանի պ. հոգաբարձուին ենթարկված բոլոր 1096 ուսումնարանների մէջ սովորում էին 83,633 հոգի, որոնցից միջնակարգ դպրոցներում 11,436, ստորին վարժարաններում 8,632, մասնաւոր դպրոցներում—3,807, սկզբնական վարժարաններում 59,758: Այդ 83,633-ը բաղկացած է 64,939 աշակերտներից և 18,694 աշակերտուհիներից, ուրեմն տղաների թիւը կազմում է 77,6%, իսկ աղջիկներինը՝ 22,4%: Այդ 1096 դպրոցների, կամ 83,633 ուսանողների վրա ծախք եղել է 3,175,099 ռուբլի:

Հայ եկեղեցական-ծխական 197 դպրոցների մէջ, որոնցից 41-ը երկդասարանեան, իսկ 156-ը միդասարանեան են, սովորել են ընդամենը 13,355 հոգի. 8,802 տղայ, 4,553 աղջիկ: Ծախս եղել է 222,123 ռուբլի:

Օտար վարչութիւններին և զանազան մինիստրութիւններին պատկանող 773 դպրոցներում սովորել են 30,929 հոգի, որոնցից 26,146 տղայ, 4,783 աղջիկ: Ծախս եղել է 1,281,177 ռուբլի:

Այդ 773-ի մէջ մտնում են և Էջմիածնի ճեմարանը ու Թիֆլիսի, Շուշու և Երևանի թեմական դպրոցները, որոնց աշակերտների թիւը 1,201 է և ծախս եղել է 104,222 ռուբլի:

Ուրեմն 1,096 պ. հոգաբարձուին ենթարկված, 197՝ հայ հոգևոր իշխանութեան և 773՝ զանազան վարչութիւններին պատկանող դպրոցական բոլոր 2,066 հաստատութիւնների մէջ սովորում են 127,917 հոգի, որոնցից 99,887-ը տղայ, 28,030-ը աղջիկ և ծախս եղել է ընդամենը՝ 4,678,399 ռուբլի:

Եթէ 2,066 դպրոցների վրա աւելացնենք և 1,917 մահմեդական մադրասաները, որոնց աշակերտների թիւը ցոյց է տուած 23,900 (21,771 տղայ, 2,129 աղջիկ) և 39 հրէական դպրոցները 859 աշակերտներով (838 տղայ, 21 աղջիկ), այն ժամանակ բոլոր 4,022 դպրոցների սովորողների թիւը կը լինի 152,655:

Ուրեմն միլիոն բնակիչ ունեցող Կովկասում և Անդրկովկասում 4,022 կրթական հաստատութիւն կայ և 152,655 աշակերտ:

Հայոց հոգևոր իշխանութեան ենթարկված ստորին և միջնակարգ եկեղեցական ուսումնարանների մասին մենք կը խօսենք աւելի մանրամասն առանձին յօդուածում:

Հ. Ա.

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Նշանաւոր ռուս գիտնական Մաքսիմ Կովալեվսկի ներկայ 1893 թուին հրատարակեց Պարիզում ֆրանսիական լեզուով 520 երեսից բաղկացած մի մեծ աշխատութիւն, որ կրում է հետևեալ վերնագիրը. Coutume contemporaine et loi ancienne. Droit coutumier ossétien éclairé par l'histoire comparée. Paris 1893: Հեղինակը երկու անգամ այցելել է օսերի երկիրը և ժողովել է բազմաթիւ նիւթեր օսերի և նրանց շրջապատող ազգութիւնների իրաւաբանական սովորութիւնների մասին: Բացի դրանից, օգտվել է նախորդ հետազօտողների, օրինակ Շանաեվի, Պֆաֆի և Կովկասեան լրագիրներում աշխատակցողների ուսումնասիրութիւններից:

Օսերի կեանքը քննելով, հեղինակը գտել է շատ հետաքրքրական կէտեր, որոնցով լոյս է սփռվում արիական ազգերի հին իրաւունքի վրա: Գործադրելով համեմատական պատմութեան եղանակը—նա պարզել է օսերի կեանքի սովորութիւնների այնպիսի կողմերը, որոնք այլապէս կերևային օտարոտի, անբացատրելի: Կովալեվսկին դրել են այդ եղանակը գործադրելու լեզուագիտական և ուրիշ հետազօտութիւններ: Օրինակ, Շեգրէնի սկզբնական ուսումնասիրութիւններով և Միլլերի մանրամասն աշխատութիւններով արդէն հաստատվել էր գիտական աշխարհում օսերի լեզուի՝ իրանական ծագում ունենալը: Նոյնը կատարվել էր և մի քանի ճանապարհորդների (օրինակ Հակստհաուզէնի) հաղորդած թռուցիկ, բայց սրամիտ դիտողութիւններով:

Կովալեվսկիի ներկայ գրքով մի կողմից հարստանում է համեմատական իրաւաբանական գիտութիւնը, միւս կողմից գիտնականօրէն բացատրվում են օսերի նման սակաւածանօթ մի ազգի իրաւաբանական կեանքի երևոյթները:

Կովալեվսկիի աշխատութիւնը շատ հետաքրքրական է և մեզ՝ հայերիս համար, որովհետև մեր պատմական կեանքը անցել է այն երկրում, որ հարևան է օսերի երկրին:

ՆԱՄԱԿ ԷՋՄԻԱԾՆԻՑ

Նոյեմբերի 21-ին

Երէկ դեռ վաղ առաւօտ էր, որ Վեհափառ Կաթողիկոսը ճեմարանից դուրս՝ սինոդի նախկին շինութեան մէջ ապրող ուսանողներին պատուեց իր այցելութեամբ: Վեհափառը շրջեց ննջարանները, խօսեց ուսանողների հետ, հայրաբար խրատներ կարդաց և ապա փակ կառքով և միաբանութեան բազմաթիւ անդամների ուղեկցութեամբ ճանապարհ ընկաւ դէպի Հռիփսիմէի վանքը, ուր այդ օրը, հանդիսաւոր պատարագից յետոյ, Էջմիածնում եղած բոլոր աբեղաներին վարդապետական իշխանութիւն և գաւազան կրելու իրաւունք պիտի շնորհվէր: Երբ Վեհափառը վանք հասաւ, դեռ պատարագը չը սկսած՝ բազմաթիւ հանդիսականներ տեղ էին բռնել տաճարում, սպասելով և Վեհափառին և նրա կատարելիք հանդիսին: Պատարագին երգում էր ճեմարանի երգեցիկ խումբը:

Որոշված էր, որ այդ կարգը կատարէր տեղակալ Երեմիա սրբազանը. բայց նշանակած օրը Վեհափառը ցանկացաւ անձամբ կատարել այդ հանդէսը: Սովորական կարգերը կատարելուց յետոյ, իր առաջ կանգնած նորընծաներին և ժողովրդին Վեհափառ Կաթողիկոսը դիմեց մի կարճ ատենաբանութեամբ, որի բովանդակութիւնը արդէն մօտաւորապէս հաղորդված է ձեզ՝ վարդապետների անունների և ազգանունների հետ միասին:

Այս նամակով հաղորդում ենք մի քանի տեղեկութիւններ այդ տան վարդապետների մասին, ի գիտութիւն հասարակութեան:

1) Եփրեմ վարդապետ Սուքիասեան—աբեղայութիւն է ստացել հանգուցեալ Մակար կաթողիկոսի օրով: Տեղակալ Երեմիա սրբազանը Մակար կաթողիկոսի ժամանակից յետոյ նշանակեց սրան ծախսարար և այդ պաշտօնը շարունակում է մինչև այսօր. կաթողիկոսական հրաւիրակութեան անդամներից մէկն է:

2) Նահապետ վարդապետ Նահապետեան—ճեմարանի նախկին տեսուչ, ձեռնադրված հանգուցեալ Մակար կաթողիկոսի օրով:

3) Սահակ վարդապետ Ամատունի—աբեղայութիւն է ստացել հանգուցեալ Մակար կաթողիկոսի օրով և այն ժամանակից վանքի գրադարանապետ է նշանակված. տեղակալ Երեմիա սրբազանը սրան ևս նշանակում է ծախսարար, և մինչև այժմ էլ գտնվում է այդ պաշտօնում:

4) Լեոն վարդապետ Խօջայեան—ճեմարանի նախկին ուսուցիչ, տեղակալ Երեմիա սրբազանի ձեռքով ձեռնադրված, այժմ ուսումնարանական վարչական յանձնաժողովի անդամ:

5) Մեսրոպ վարդապետ Տէր-Մովսիսեան, ճեմարանի նախկին ուսուցիչ: Տեղակալ Երեմիա սրբազանի հրամանով անցեալ տարի ձեռնադրված՝ Արիստակէս եպիսկոպոս Սեդրակեանի ձեռքով: Այժմ Վեհափառը սրան յանձնել է վանքի գրադարանի ցուցակը կազմել և հսկել այնտեղ կատարվող աշխատութիւնների վրա՝ իբրև կառավարիչ:

6) Եղիշէ վարդապետ Մուրադեան—տեղակալ Երեմիա սրբազանի հրամանով անցեալ տարի ձեռնադրված՝ Արիստակէս եպիսկոպոս Սեդրակեանի ձեռքով: Աշխատում է վանքի գրադարանում:

7) Վահրամ վարդապետ—Մակար կաթողիկոսի օրով ձեռնադրված, և տեղակալ Երեմիա սրբազանից ծախսարար է նշանակված, որ և շարունակում է մինչև այժմ:

8) Ադամ վարդապետ—Մակար կաթողիկոսի օրով ձեռնադրված. սա է լուսարարապետի օգնական:

9) Մխիթար վարդապետ Տէր-Մկրտչեան—անցեալ տարի Տեղակալի հրամանով ձեռնադրված՝ Արիստակէս եպիսկոպոս Սեդրակեանի ձեռքով: Վեհափառ Հայրապետի հրամանով շրջեց մի քանի գաւառներ վանքի ապառիկները հաւաքելու: Այդ պաշտօնը շարունակելու է:

10) Աշոտ վարդապետ Շախեան—ձեռնադրված հանգուցեալ Մակար կաթողիկոսի օրով:

Այստեղ Մոմատան խմբի կողմից փորձեր եղան խանգարելու այդ վարդապետներից վեցի ձեռնադրութեանը, բայց այդ փորձը այս անգամ չաջողվեց: Վեհափառ Կաթողիկոսը բոլորին էլ այդ աստիճանը տուեց, ասելով՝ «գնացէք և գործեցէք»: Եւ հէնց այդ գործունէութիւնը կը լինի դրանցից իւրաքանչիւրի պատիւը և ամենամեծ աստիճանը:

Z.

ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

Նոյեմբերի 17-ին

Երևանեան նահանգը, որը ամբողջ Կովկասում յայտնի է իր հացի արդիւնաբերութեամբ, ներկայ տարում, ընդհանրապէս, այնպիսի վատ հունձ ունեցաւ, գլխաւորապէս երաշտութեան պատճառով, որ ժողովուրդը ստիպված է ցորեն գնել: Այս նահանգի մի քանի գաւառներում, որպիսիներն են՝ Սուրմալուի, Էջմիածնի, Երևանի, Շարուրի և Նախիջևանի գաւառները, ուր ժողովուրդը, բացի հացի մշակութիւնից, պարապում է նաև բամբակի, բրնձի, խաղողի և այլ բերքերի մշակութեամբ, նիւթապէս աւելի ապահով դրութեան մէջ է, քան թէ սարահարթերում և լեռնոտ մասերում բնակվող ժողովուրդը:

Մինչդեռ դաշտային մասերում ապրող ժողովուրդը, երկրագործական զանազան արդիւնաւէտ ճիւղերը մշակելով՝ եկամուտներ շատ է ստանում և տնտեսապէս ապահով է, ընդհակառակն՝ միւս մասերում ժողովուրդը, միջոց չունենալով դաշտային բոլոր բերքերը մշակել, արդիւնք շատ քիչ է ստանում և նիւթապէս էլ աղքատ է:

Այժմ, երբ տարին այդքան անաջող է և անբերրի, ուր նոյն իսկ դաշտային տեղերի բնակիչները անտեսապէս ընկնում են և մեծամեծ պարտքերի մէջ խրվում, ինքն ըստ ինքեան հասկանալի է լեռնոտ մասերի և սարահարթերի բնակիչների տնտեսական ճգնաժամը:

Օրինակ, Ալէքսանդրօպոլի, Աբարանի, Դարաչիչագի և Նոր-Բայազէթի գաւառները, բարձր դիրք ունենալով և ցուրտ լինելու պատճառով, բացի հայատնտեսներից չեն կարող մշակել մի որ և իցէ ուրիշ բերք, որը յատուկ է տաք և դաշտային երկրին: Եւ ահա ժողովուրդը, որը պարտքեր անելով, արիւն քրտինք թափելով մի երկու խալվար ցորեն է ձեռք բերում և հողի մէջ գցում երկար ամիսներ սպասելուց յետոյ, երբ այդ բոլորը ոչնչանում է ու չորանում, ասացէք, ինչ կը լինի նրա դրութիւնը, որի միակ ապրուստի աղբիւրը արտը, ծուլացած հասկերի փոխարէն, խոպանացած դաշտի է փոխարկվում...

Ներկայ բօպէում, Երևանեան նահանգը ընդհանրապէս, մանաւանդ Ալէքսանդրօպոլի, Աբարանի, Դարաչիչագի և Նոր-Բայազէտի գաւառները հացի խիստ կարիքի մէջ են, և ժողովրդի մեծ մասը ստիպված է ցորեն գնել:

Այս տարի հունձի անաջող լինելու պատճառով, ցորենի գինը ոչ միայն Երևանի շուկայում, այլ և գաւառներում խիստ թանգ է: Ներկայ բօպէում Երևանի շուկայում մեծ քանակութեամբ ցորեն է դրված, և չը նայած որ այդ ցորենը շաբաթներով նոյն իսկ ամսով քնում է, բայց և այնպէս ցորենի խալվարը (30 պուդ) 45 ռուբլուց չէ իջնում. լաւ տեսակը ծախվում է նոյն իսկ 50 ռուբլիով, իսկ գարու խալվարը՝ 30 ռուբլիով: Ժողովուրդը, երբեմն, 200 ր. է վճարել մի խալվար ցորենին, սակայն անցեալում այդքան դժուար չէ եղել նրան վճարել 200 ռուբլի, ոլքան այժմ 50 ռուբլի և այս ունի իր պատճառը... Ժողովուրդը այժմ յատին ծայր աղքատութեան է հասել:

***

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Բաղու, 24 Նոյեմբերի

Գրիգոր Արծրունու թաղման ժամանակ պատգամաւոր էի Բաղուից երիտասարդութեան կողմից: Պատգամաւորութեանս համար յատկացրած ծախսերից մնաց 30 ռուբլի, որը ուղարկում եմ խմբագրութեանդ և խնդրում եմ, որ գործ դնէք այս գումարը Արծրունու գրուածքները տպագրելու համար:

Ա. Կաճկաճեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Շաբաթ, ամսիս 27-ին, Հայուհեաց Բարեգործական ընկերութեան կարուձևի դպրոցում տեղի ունեցաւ խոհարարական դասընթացքի Հ ո ր ե ր ո ր դ շրջանի աւարտման հանդէսը: Ուսանողուհիների ձեռքով պատրաստած կերակուրները շարված էին սեղանի վրա ի ցոյց հանդիսականների: Պ. Ա. Քալանթար կարդաց մի համառօտ հաշիւ, որից յետոյ հանդիսականները նստեցին սեղան փորձելու կերակուրները: Հաշուից երևաց հետևեալը: Խոհարարական դասընթացքի այժմեան ղեկավարները, օգտվելով մի տարվայ փորձից, մտցրել են դասաւանդութեան մէջ աւելի սիստեմ, ներդաշնակութիւն և գործնականութիւն: Ամենայն օր մանրամասն հարց ու փորձ է անվում նախորդ օրվայ կերակուրների պատրաստութեան մասին: Առաջին ամիսները թոյլ էր տրվում, որ ուսանողուհիները բերեն իրանց հետ մթերք և պատրաստեն կերակուրներ: Այսպիսով մտադրուած էր, որ ժողովուրդը ստիպված է ցորեն գնել: Այս նահանգի մի քանի գաւառներում, որպիսիներն են՝ Սուրմալուի, Էջմիածնի, Երևանի, Շարուրի և Նախիջևանի գաւառները, ուր ժողովուրդը, բացի հացի մշակութիւնից, պարապում է նաև բամբակի, բրնձի, խաղողի և այլ բերքերի մշակութեամբ, նիւթապէս աւելի ապահով դրութեան մէջ է, քան թէ սարահարթերում և լեռնոտ մասերում բնակվող ժողովուրդը:

Մինչդեռ դաշտային մասերում ապրող ժողովուրդը, երկրագործական զանազան արդիւնաւէտ ճիւղերը մշակելով՝ եկամուտներ շատ է ստանում և տնտեսապէս ապահով է, ընդհակառակն՝ միւս մասերում ժողովուրդը, միջոց չունենալով դաշտային բոլոր բերքերը մշակել, արդիւնք շատ քիչ է ստանում և նիւթապէս էլ աղքատ է:

Այժմ, երբ տարին այդքան անաջող է և անբերրի, ուր նոյն իսկ դաշտային տեղերի բնակիչները անտեսապէս ընկնում են և մեծամեծ պարտքերի մէջ խրվում, ինքն ըստ ինքեան հասկանալի է լեռնոտ մասերի և սարահարթերի բնակիչների տնտեսական ճգնաժամը:

Օրինակ, Ալէքսանդրօպոլի, Աբարանի, Դարաչիչագի և Նոր-Բայազէթի գաւառները, բարձր դիրք ունենալով և ցուրտ լինելու պատճառով, բացի հայատնտեսներից չեն կարող մշակել մի որ և իցէ ուրիշ բերք, որը յատուկ է տաք և դաշտային երկրին: Եւ ահա ժողովուրդը, որը պարտքեր անելով, արիւն քրտինք թափելով մի երկու խալվար ցորեն է ձեռք բերում և հողի մէջ գցում երկար ամիսներ սպասելուց յետոյ, երբ այդ բոլորը ոչնչանում է ու չորանում, ասացէք, ինչ կը լինի նրա դրութիւնը, որի միակ ապրուստի աղբիւրը արտը, ծուլացած հասկերի փոխարէն, խոպանացած դաշտի է փոխարկվում...

Ներկայ բօպէում, Երևանեան նահանգը ընդհանրապէս, մանաւանդ Ալէքսանդրօպոլի, Աբարանի, Դարաչիչագի և Նոր-Բայազէտի գաւառները հացի խիստ կարիքի մէջ են, և ժողովրդի մեծ մասը ստիպված է ցորեն գնել:

Այս տարի հունձի անաջող լինելու պատճառով, ցորենի գինը ոչ միայն Երևանի շուկայում, այլ և գաւառներում խիստ թանգ է: Ներկայ բօպէում Երևանի շուկայում մեծ քանակութեամբ ցորեն է դրված, և չը նայած որ այդ ցորենը շաբաթներով նոյն իսկ ամսով քնում է, բայց և այնպէս ցորենի խալվարը (30 պուդ) 45 ռուբլուց չէ իջնում. լաւ տեսակը ծախվում է նոյն իսկ 50 ռուբլիով, իսկ գարու խալվարը՝ 30 ռուբլիով: Ժողովուրդը, երբեմն, 200 ր. է վճարել մի խալվար ցորենին, սակայն անցեալում այդքան դժուար չէ եղել նրան վճարել 200 ռուբլի, ոլքան այժմ 50 ռուբլի և այս ունի իր պատճառը... Ժողովուրդը այժմ յատին ծայր աղքատութեան է հասել:

***

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Բաղու, 24 Նոյեմբերի

Գրիգոր Արծրունու թաղման ժամանակ պատգամաւոր էի Բաղուից երիտասարդութեան կողմից: Պատգամաւորութեանս համար յատկացրած ծախսերից մնաց 30 ռուբլի, որը ուղարկում եմ խմբագրութեանդ և խնդրում եմ, որ գործ դնէք այս գումարը Արծրունու գրուածքները տպագրելու համար:

Ա. Կաճկաճեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Շաբաթ, ամսիս 27-ին, Հայուհեաց Բարեգործական ընկերութեան կարուձևի դպրոցում տեղի ունեցաւ խոհարարական դասընթացքի Հ ո ր ե ր ո ր դ շրջանի աւարտման հանդէսը: Ուսանողուհիների ձեռքով պատրաստած կերակուրները շարված էին սեղանի վրա ի ցոյց հանդիսականների: Պ. Ա. Քալանթար կարդաց մի համառօտ հաշիւ, որից յետոյ հանդիսականները նստեցին սեղան փորձելու կերակուրները: Հաշուից երևաց հետևեալը: Խոհարարական դասընթացքի այժմեան ղեկավարները, օգտվելով մի տարվայ փորձից, մտցրել են դասաւանդութեան մէջ աւելի սիստեմ, ներդաշնակութիւն և գործնականութիւն: Ամենայն օր մանրամասն հարց ու փորձ է անվում նախորդ օրվայ կերակուրների պատրաստութեան մասին: Առաջին ամիսները թոյլ էր տրվում, որ ուսանողուհիները բերեն իրանց հետ մթերք և պատրաստեն կերակուրներ: Այսպիսով մտադրու-

Ֆօտոտ Ամբեմի Ամբեմեան

—

Վաղարշապատ Ամբեմ Ամբեմեան ծնած է 1890 թուականին։ Ուսումնասիրած է Էջմիածնի Գեղարուեստի դպրոցը։ Ապրած է Թիֆլիս, Պաքու, Սարատով, Մոսկուա, Սանկտ Պետերբուրգ, Գանձակ, Գորիս, Ստեփանակերտ, Գորիս։ Ունի հետևեալ գործերը՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Ա. Տարեգրութիւն, Գանձակ, 1 լ.։ Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Ա. Տարեգրութիւն, Գորիս

սուլթանը Միքայել փաշային վեզիրութեան աստիճան է տուել։

—Սպանիան վճռել է Մարոկկո ուղարկել մարշալ Մարտինէց-Կամպոսին, որը 1878 թուին ճնշեց Կուբայում եղած ապստամբութիւնը։ Մարշալը մեծ ժողովրդականութիւն է վայելում Սպանիայի թէ ժողովրդի և թէ զօրքի մէջ։ Մարտինէց Կամպոսը այժմ 59 տարեկան է։ Նա ճնշել է նոյնպէս կարլիստների ապստամբութիւնը 1870 թուին և ֆէդէրալիստների ապստամբութիւնը Բարսէլօնում 1878 թուին։

—Վիէննայից «Ind. Belge» լրագրին հեռագրում են, թէ Սերբիայի ֆինանսական, քաղաքական և տնտեսական դրութիւնը յուսահատական է։

—Բոլգարական իշխան պրինց Ֆէրդինանդը, կոմս Գարտէնաուի թաղման ժամանակ, ասել է հետևեալ ճառը. «Որպէս բոլգարական թաղաւոր և որպէս բոլգարական զօրքի ու ժողովրդի ծայրագոյն առաջնորդ, ընդունում եմ պրինց Ալէքսանդրի՝ առաջին բոլգարական իշխանի նշխարները, և յանձնում եմ այդ նշխարները այս հողին, որը նա գիտէր պաշտպանել այնպիսի քաջութեամբ։ Թող նրա անձնազոհութեան և եռանդի օրինակը մեզ համար սրբազան մնայ։ Բոլգարական ժողովրդի անունից, բոլգարական զաղափարի համար բաբախող բոլոր սրտերից ես խոստանում եմ, որ հանդուցեալի յիշատակը յաւիտեան կը մնայ»։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Որպէս զի օրվայ մի յայտնի ժամը, օրինակ երեկոյեան կամ առաւօտեան 6 ժամը, կարելի լինի առանց նշանակելու «երեկոյեան և առաւօտեան» բառերը գրել և հասկանալ, Իտալիայում այս նոյեմբերի 1-ից (նոր տոմարով) մտցրել են նոր ժամահաշիւ։ Ժամերը հաշուում են ոչ թէ 12 և 12, այլ ուղիղ քսանչորս, սկսելով կէս գիշերից և վերջացնելով կէս գիշերին։ Այսպէս, առաւօտեան ժամը 6-ը ուղիղ գրում են 6, իսկ երեկոյեանը 18 (12+6)։ Ժամացոյցների վրա աւելացրել են մի նոր շրջանագիծ, որի վրա նշանակված են 12-ից մինչև 24 թուերը։

* * *

Մի քանի օր առաջ Ջէնովա քաղաքի կայարանում բազմաթիւ հետաքրքրվողներ էին հաւաքվել, և սպասում էին աւստրո-ունգարական արտաքին գործերի մինիստրի գալուն։ Երկաթուղու գնացքը մօտեցաւ, բայց մինիստրական վագոնից ոչ ոք չը դուրս եկաւ։ Երկաթուղիական ծառայողներից մէկը տեսնելով կայարանում ֆրակ հագած մի ծեր մարդու, հարցրեց, թէ նա չէ՞ արդեօք մինիստր կոմս Կալնոկի։ Ծեր մարդը գլուխը խոնարհեցրեց և ժպտաց։ Այդ արդէն բաւական էր, և ահա ծերունուն սկսեցին մեծ պատիւներ տալ, նրա իրեղէնները իսկոյն հիւրանոց տարան, բայց մի անչափ հիւրանոց, որ չատ զարմացրեց բոլորին։ Շուտով երևաց, որ ծերունին մի գերմանացի մարդ է, ֆօն Կարատ ազգանունով, որը տեսնելով թէ իրան մինիստրի տեղ են ընդունում, կամեցել էր ծաղրել ջէնովացիներին։

* * *

Լրագիրներում գրող կանանց թիւը հաշուում են Ֆրանսիայում 237, Ամերիկայում 588, Անգլիայում 850, իսկ Գերմանիայում 960 հոգի։

* * *

Անգլիական համայնքների ժողովում սովորութիւն կայ, որ համայնքների ժողովի առաջնորդը և դիմադրական կուսակցութեան ղեկավարը համարեա միշտ այնպէս են նստում, որ կարող են միմեանց երեսին նայել։ Այդ սովորութեան շնորհով—գրում է իրլանդական պատգամաւոր Օկոնոր անգլիական լրագիրներից մինում—չատ պարզ նկատվում էր այժմեան առաջին մինիստր Գլադստոնի և հանդուցեալ Բիկոնսֆիլդի բնաւորութիւնների մէջ եղած զանազանութիւնը։ Գլադստոն անհանգստութեան և բարկացկոտութեան տիպար է։ Բոլորը, ինչ որ նա զգում է, երևում է նրա դէմքի վրա։ Եթէ որ նրան հուետորը հետաքրքրում է, նա դէպի առաջ է թեքվում. եթէ ձանձրութիւն է զգում, այն ժամանակ յետ է նստում։ Երբ որ նա դժգոհ է, այդ բանը իսկոյն տեսնում ես։ Խօսը, նայելով Գլադստոնի դէմքի վրա, կարող է հասկանալ, թէ ինչ է կատարվում համայնքների ժողովում։ Բոլորովին հակապատկեր էր դրան Բիկոնսֆիլդ։ Ժամերով նա անշարժ նստում էր պարլամենտում և նրա դէմքի ոչ մէկ մկանունք չէր շարժվում։ Նրա գլուխը միշտ խոնարհած էր, իսկ դէմքը կատարելապէս անշարժ էր մնում։ Նա, մի խօսքով, նմանվում էր արևելեան սֆինքսին, որի հետ յաճախ համեմատում էին նրան ժամանակակից գրողները։

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՍԻՍԱՑԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՆԻՑ

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 27 նոյեմբերի։ «Русская Мысль» ամսագրին յայտնված է երկրորդ նախազգուշութիւն «Սոցիալիզմի տնտեսական հիմքի վրա» վերնագրով յօդուածի համար, որի մէջ սոցիալիզմի չափազանց վնասակար վարդապետութիւններ են քարոզվում, և բացի դրանից հեղինակը, դիտմամբ աննշան պատասխաններ տալով, երևի նպատակ ունի տարածել այդ մտքերը։

ՊԱՐԻԶ, 27 նոյեմբերի։ Սերբիական նախկին դեսպան Գէօրգեվիչին, որին կամենում էր սպանել ֆրանսիացի անարխիստը, օպէրացիա արին։ Բժիշկները հիւանդի կրծքից $1^1/_2$ լիտր փչացած արիւն հանեցին։—Ազգային պաշտպանութեան պարլամենտական խումբը քննում էր գործերի դրութիւնը Ալպեան սարերում խոալական զօրքերի ներս խուժման դէպքում։ Խումբը վճռեց զինուորական մինիստրի ուշադրութիւնը դարձնել։—Ֆրանս-ռուսական տոնախմբութիւնների մասնաժողովի բիւրօն յանձնեց բարօն Մօրէնհէյմին 10,000 ֆրանկ ռուսաց կօլօնիայի բարեգործական ընկերութեան համար։

ԲԵՐԼԻՆ, 27 նոյեմբերի։ Շուտով կը վերացվի ռուս դաղթականներին Համբուրգից ուղարկելու արգելքը։—Գերմանական առևտրական դաշնագիրներ կապելու համար կազմած յանձնաժողովը և գերմանական արդիւնաբերողների կենտրօնական դաշնակցութիւնը միաձայն քուէարկեցին մի վճիռ յօդուտ առևտրական դաշնագիրների և առևտրական համագումար ժողովի ընդհանուր ժողովը նշանակված է յունվարին, որովհետև հէնց այդ ժամանակը Ռուսաստանի հետ կապվող առևտրական դաշնագրի նախագիծը կենթարկվի արդէն, երևի, բէյխստագի քննութեանը։

ՊԱՐԻԶ, 27 նոյեմբերի։ Այսօր, պատգամաւորների ժողովի նիստի ժամանակ, աջակողմեան ամբիոնից գցեցին մի գործիք, որը պայթեց դահլիճում։ Ասում են, սպանված են պատգամաւոր Դէմիրի վարդապետը և պրիստաւներից մէկը։ Պատգամաւորների ժողովում պայթիւն եղաւ ուղիղ 4 ժամին։ Ամբիոնների վրա սարսափ տիրեց. կանայքը երկիւղից խելակորոյս լինելով, փախչում էին։ Մի քանի ականատեսներ վիրաւորվեցին և պատգամաւորների ժողովի նախասենեակներում յուզմունքը չատ զօրեղ էր։ Նիստի դահլիճում թանձր ծուխ էր կանգնած։ Ասում են, որ մօտ քսան պատգամաւորներ վիրաւորված են։ Պատգամաւորների մեծ մասը չաապով տեղերից վերթռան՝ փախչելու նպատակով, սակայն Դիւպիւի հանգիստ մնաց իր նախագահական բազկաթոռում և իր ընկերակիցներին էլ առաջարկեց հետևել իր օրինակին, որպէս և արեցին։

ՀՌՕՄ, 28 նոյեմբերի։ Երէկ Յանարդէլլի հաղորդեց թագաւորին, որ ինքն հրաժարվում է մինիստրութիւն կազմել։ Թագաւորը Նէապոլից կանչեց Կրիսպիին։

ՊԱՐԻԶ, 28 նոյեմբերի։ Ռումբը պայթեց ամբիոնի ծայրի մօտ և կտորները ցրվեցին ամբողջ դահլիճի մէջ։ Գտնված են երկաթէ խարտուքի և արճիճի կտորների հետքեր։ Կվէստորները փակեցին բոլոր դռները։ Հաւատացնում են, որ յանցաւորը մի բարձրահասակ և խարտեաշ մազերով ու մեծ միրուքով մարդ է, որի ձեռքը կարվել է բոլոր վիրաւորվածների վրա առանձին հսկողութիւն է նշանակված։ Պատգամաւորների ժողովում կալանաւորված են մօտ 60 հոգի։ Սաստիկ կասկածում են Շամպո անունով մի կօշկակարին, որը նորերս է Պարիզ եկել։ Շամպո չփոթվեց, երբ իրան կալանաւորված տեսաւ։ Երբ տանում էին կալանաւորվածներին, որոնց թիւում գտնվում էր և ծիրար անունով մէկը, ամբոխից մի ոմն աղաղակեց. «Այս անգամ քեզ բռնեցին»։ Գաղտնի ոստիկանութեան գլխաւորը կալանաւորեց այդ անյայտ մարդուն։ Մօտ 50 մարդիկ են վիրաւորված, մեծ մասը թեթև կերպով։ Լատէն թաղում ուսանողները ցոյց արին, գոչելով «Թող կորչեն անարխիստները»։ Բուրբօնեան պալատի բոլոր ազատ բնակարանները ժամանակաւոր հիւանդանոցների են փոխարկված։ Վեց կասկածելի անձինք, պայթիւնից յետոյ, վազեցին դէպի բուֆէտը՝ մի եղք պառելով։ Հաւատացնում են, որ ռումբը գցել է Լէնուար անունով մէկը։ Հասարակութեանը այժմ այլապէս չեն դուրս թողնում, մինչև որ իւրաքանչիւր մարդ չէ ներկայացնում իր անձնաւորութեան վերաբերեալ վկայական։

ՊԱՐԻԶ, 28 նոյեմբերի։ Մինիստրները քննում էին օրէնսդրական և վարչական միջոցներ, որ պէտք է անյապաղ գործ դնել հասարակութիւնը պաշտպանելու համար անարխիստներից։ Պատգամաւորների ժողովում ռումբ գցողը, զիջանելով ստիպողական հարցափորձին՝ յայտարարեց, որ իր անունն է Վալիան և որ ինքն ծնվել է Մէզիրում 1861 թուին։ Նրա անձնաւորութիւնը ճանաչված է.—դա մի յեղափոխական է, որ մի քանի ամիսներ արդէն ընակվում է Պարիզում և գտնվում էր պոլիցիայի հսկողութեան տակ։

—

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱ

Նոյեմբերի 26-ին

Լօնդոնի վրա 10 ֆունտ արժէ	94 ր.	60 կ.	
Բերլին վրա 100 մարկ —	46 ր.	30	»
Պարիզի վրա 100 ֆրանկ —	37	» 55	»
Ոսկի — — արժէ	7	» 63	»
Մաքսային կուպօններ —	152	» 75	»
Արծաթ — — —	—	» —	»
Բօրսային դիսկօնտեր —	5	» 7	»
Պետ. բանկի 5% տոմս 1 շրջանի	$102^3/_4$	» —	»
— — — — 2-րդ	102	» 50	»
6% ոսկեայ բէնտա	154	» —	»
4% ոսկեայ փոխառութիւն	$93^2/_8$	» —	»
Արևելեան 5% փոխառ. 1-ին շրջ.	—	» —	»
— — — 2-րդ	$102^7/_8$	» —	»
— — — 3-րդ —	104	» 25	»
— — — 4-րդ —	—	» —	»
Ներքին 5% առաջին փոխառութ.	245	» —	»
— — երկրորդ —	215	» —	»
Պետական երկաթուղային բէնտա.	$102^3/_8$	» —	»
$4^1/_2$ բէնտա	—	» —	»
5% ներքին փոխառութեան	94	» —	»
5% գրաւ. թղթ. ազն. կալ. բանկի	$100^7/_8$	» —	»
Ազն. կալ. Պետ. բանկի խաղարկութ.			
Գրաւ. թղթ. — —	190	» —	»
$5^1/_2$% վկայակ. գիւղ. հող. բանկի	$98^7/_8$	» —	»
$4^1/_2$% գրաւական թղթեր կալուած.			
փոխ. կրեդիտ. ընկեր. մետալ.	155	» 75	»
— — — թղթադ.	$100^7/_8$	» —	»
Պետերբուրգի քաղաքային կրեդիտ.			
ընկերութեան օբլիգացիաները.	101	» —	»
Մոսկվայի քաղաք. օբլիգացիաներ.	100	» 50	»
Օդէսայի — —	101	» —	»
Թիֆլիսի — —	—	» —	»
Գրաւ. թղթ. Թիֆլիսի կալ. բանկի.	—	» —	»
— — Քութայիսի —	—	» —	»

Ս. Պետերբուրգի բօրսայի տրամադրութիւնը խաղաղ է։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչ՝ Մ. ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՆԵՐՍԻՍԵԱՆ ՀԱՅՈՑ ՀՈԳԵՒՈՐ ԴՊՐՈՑԻ հոգաբարձական խորհրդարանում այս տարվայ դեկտեմբերի 8-ին, երեկոյեան 8 ժամին, լինելու է աճուրդ՝ կապալով տալու, չորս տարի ժամանակով, 1-ից յունվարի 1894 թուի՝ դպրոցապատկան կալուածքը. ա) 24 սենեակներ, ուր „Քուիթայիս“ հիւրանոցն է և բ) երեք խանութ։ Այդ կալուածքը գտնվում է քաղաքիս 3-րդ մասում, Սօլդատսկի բազարում։ Պայմանաթուղթը կարելի է կարդալ հոգաբարձութեան դիւանատանը ամեն օր, բացի տօներից, առաւօտեան 10—2 ժամը։ 1—1

Լոյս տեսաւ և վաճառվում է „կենտրօնական գրավաճառանոցում“.

ՀԵՇՏ ՄԻՋՈՑ

Ռուսերէն լեզուով կարդալ, գրել և խօսել սովորելու Հայոց լեզուի օգնութեամբ (САМОУЧИТЕЛЬ РУССКАГО ЯЗЫКА). Աշխատասիրեց Վ. Աղեանց։

Գինն է 30 կոպ. ճանապարհածախսով 40 կոպ.։

Հինգ օրինակից աւելի գնողը ճանապարհածախս չէ վճարում։ Այս դասագրքով կարող են առանց ուրիշի օգնութեան, ռուսերէն սովորել նրանք, որոնք քիչ շատ հայերէն կարդալ գիտեն։

Օտարաքաղաքացիք դիմում են՝ Тифлисъ, Овакиму Айвазянцу. Чугуреты, Гончар. ул. № 44. 1—3

ՀԱՐԿԱՒՈՐ Է ՄԻ ՈՒՍՈՒՑԻՉ

Ներսիսեան կամ մի ուրիշ միջնակարգ դպրոցում աւարտած։ Ցանկացողներին խնդրում են ԱՆՑԱՊԱՂ դիմել պայմանների մասին խօսելու համար։ Շատ լաւ կը լինի, եթէ ուսուցիչը իմանայ և եկեղեցական երգեցողութիւն։ Հասցէն կարելի է իմանալ „Մշակի“ խմբագրատանը։ 2—4

Նոյեմբերի 1-ից կը ստացվի ՊԱՍՏԵՈՐԻ ՍԻՍՏԵՄՈՎ ՊԱՏՐԱՍՏԱԾ ԲՐՈՒՍՍԱՑԻ ԲՈՃՈՅ ՍՊԻՏԱԿ ՏԵՍԱԿԻ ՍԵՐՄԸ, որ արդէն յայտնի է ամբողջ Կովկասում և Պարսկաստանում իր յատկութիւններով և տուած առատ բերքով։ Սերմը կը ստացվի ուղղակի յայտնի „Էկօնօմիտես“ ֆիրմայից։ Գնել ցանկացողները կարող են դիմել ԵՂԲ. ՄՆԱՑԱԿԱՆԵԱՆՆԵՐԻՆ, Բաթումում, Թիֆլիսում, Բագվում, Նուխում Աղա-Մուսա Մահմէդովին.

Այս հասցէով. Бр. Мнацаканянцъ, Тифлисъ, կամ Баку, կամ Батумъ.
(Ե. շ.) 5—32

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ
Հ. Յ. ՕՐԲԷԼԻ
Սօլոլակայա փողոց, սեփական տանը №№ 15—16
ԸՆԴՈՒՆՈՒՄ Է ՀԻՒԱՆԴՆԵՐԻՆ
Առաւօտեան 8 ժամից մինչև 12 ժ. և երեկոյեան 4 ժամից մինչև 6 ժ.
Կիրակի և տօն օրերին առաւօտեան 8 ժամից մինչև 2 ժամ կէսօրից յետոյ։
(№ 145) 108—150

Լոյս տեսաւ
ՄՈՎՍԷՍ ԽՈՐԵՆԱՑՈՒ
ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ
Նոր թարգմանութիւն Մ. ԷՄԻՆԻ
(Ծանօթութիւններով և յաւելուածներով)։
Գինն է 2 ր. ճանապարհածախսով 2 ր. 25 կ.
Պէտք է դիմել այս հասցէով, Москва, Правленіе Лазаревскаго института կամ Тифлисъ, Центральный Книжный Магазинъ.
(Ե.) (№ 3) 5—10

ԴԵՂԱԳՈՐԾ Ա. Ս. ԱՐԻՍՏԱԿԵԱՆԻ ՊԱՀԵՍՏ ԵՒ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ դեղերի, մորթին գեղեցկացնող և հոտաւէտ, նոյնպէս և առողջապահական նիւթերի և տնտեսական գործիքների, բացված է կուկիայում, Վօրոնցովի արձանի հանդէպ, բժշկապետ Նաւասարդեանի առաջին մասն. հիւանդանոցի տակ։
(№ 67) 44—100 (Ե. շ.)

ՀԱՅՈՒՀԵԱՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
մասնաժողովը սրանով յայտնում է, որ խոհարարական արհեստի հինգերորդ դասընթացքը բացվում է ներկայ տարվայ դեկտեմբեր ամսին։ Ցանկացողները կարող են գրվել Սերգէեվսկի փողոցում, տուն Բայանդուրովի, № 14, ժամի 10—3-ը, ամեն օր։
(№ 10—1893) 3—3

Дозволено цензурою, Тифлисъ, 29 Ноября 1893 г. Типографія Канцел. Главнонач. Гражданск. частью на Кавказѣ, Лорисъ-Меликовская ул., д. каз.